ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 25.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ պայմանագրում 26.01.2026թ. կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշում
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.13 կետեր

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10

25.10.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ գնման պայմանագրի

ք. Երևան 26.01.2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Գ. Եղիազարյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Էմ Ջի Դիզայն>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Գ. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և ՀՀ Արարատի մարզի Մասիսի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների նկատմամբ հեղինակային հսկողության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 25.10.2021թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԾՁԲ-21/11Հ գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011027688
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Գ. Եղիազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
<<Էմ Ջի Դիզայն>> ՍՊԸ
Ք. Երևան, Բաղյան փող. 1-ին նրբ. 6/6
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163518011545
ՀՎՀՀ 00883641

Տնօրեն՝

_____ Գ. Ավագյան
(ստորագրություն)
Կ.Տ.